զոր կը կրէին ծնողք իրենց շալակը։ Այսպէս թափօրը քաղաք կը մտնէր՝ ոչ թէ տաճարի հրապարակը(*)՝ որ արգիլուած էր, այլ Ս. Յարութեան եկեղեցին (Dal. էջ 325)։ Զիթենեաց լերան վրայ, ըստ ձեռ. Հայ Ճաշոցի, աւանդական պաշտամունքի օրերը հետևեալներն էին. Ս. Ծնունդեան հինգերորդ օրը, Ծաղկազարդին. «Ի նմին աւուր ի յիններորդ ժամու ելանեն ի լեառն Զիթենեաց հանդերձ ոստովք արմաւենեաց և անդ սաղմոսեն և աղաւթեն մինչև մերձ ի մեռաւոներորդ ժամն, և այնուհետև իջանեն ի Սուրբ Յարութիւն սաղմոսելով...»։ Աւագ Երեքշաբթի օրն. «Երեքշաբթի աւր ժողովին ի լերինն Զիթենեաց ի տասներրորդ ժամու և այս կանոն կատարի...»։ Աւագ Հինգշաբթի օրն. «... Նոյն ժամայն ելանեն ի լեառն Զիթենեաց և կատարեն զերեկոյեան պաշտաւնն, և յարին ի սոյն և զհսկումն և ըստ երից սաղմոսաց գոբաղոյ և աղօթք հանդերձ ծունր դնելով կատարեն...», «ի սմին ժամու գիշերոյն ելանեն ի քրուն և այս կանոն կատարի...», «ի նմին ժամու գիշերոյն ժողովին յաշակերտարանն և ընթեռնուն աւետարանն...», «ի նմին ժամու գիշերոյն իսկոյն իջանեն ի սրբոյ լեռնէն Զիթենեաց ի Գեթսեմանի»։

Զատկի օրը. «... ի նմին կիւրակէի Սրբոյ Զատկին ելանեն յիններորդ ժամու ի սուրբ լեառն Զիթենեաց և անդ վայր մի սաղմոսեալ իջանեն հանդերձ սաղմոսիւք ի Սուրբ Յարութիւնն...», Զատկի հինգշաբթի օրը. «Հինգշաբթի աւր ի ս. լեառն Զիթենեաց

(*) Նոյն թափօրը Խաչակրաց ժամանակ կրնար երթալ Տաճարը, վասնզի ան եկեղեցիի վերածուած էր (Baumstark, Oriens Christ. էջ 219)։